ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, 10-րդ և 27-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով Պալատի երիտասարդական խորհրդի անդամ Ստելլա Սայադխանյանի (արտոնագիր՝ թիվ 3129) դիմումն իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ և այդ կապակցությամբ առաջանալիք թափուր տեղը 2021 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբան Վահագն Թանգամյանի (արտոնագիր՝ թիվ 3083) համաձայնության առկայությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ Ստելլա Սայադխանյանի (արտոնագիր՝ թիվ 3129) լիազորությունները,

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ նշանակել փաստաբան **Վահագն Թանգամյանին** (արտոնագիր՝ թիվ 3083)՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

07 սեպտեմբեր 2023թ.
թիվ 226-Ա
ք. Երևան